



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 87-Ա**

«19» հոկտեմբերի 2018 թվական

գյուղ Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ  
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱՅԻՍԱ ԲԱՅՐԱՄԻ ՖՈՄԻՆՈՎԱՅԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ  
ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Ռայիսա Բայրամի Ֆոմինովայի դիմումը՝

**ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված քաղաքացի Ռայիսա Բայրամի Ֆոմինովայի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 1215549 վկայականով անշարժ գույքի նախկին 25-րդ շենքի 17-րդ բնակարանի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր, 26-րդ փողոց, շենք 1, բնակարան 17 :

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



*Եփ Բայրամ*

**ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«19» հոկտեմբերի 2018 թվական  
գյուղ Ամասիա